ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

№ 1112/4961-22
09.02.2022

Էլ. հասցե՝ armenmirzoiian@gmail.com, հեռ.՝ 010 563 363
«Հետք» թերթի լրագրող Արմեն Միրզոյանին

Հարգելի՛ պարոն Միրզոյան,

Ի պատասխան փետրվարի 2-ին ուղարկված Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ, ինչպես նշել եք, ՌԴ-ում ՀՀ դեսպանությունն իր դիրքորոշումն արտահայտնել է հունվարի 29-ին հրապարակված հայտարարության մեջ: Միևնույն ժամանակ դեսպանությունը շարունակում է կապ պահպանել «Ռուսաստանի հայերի միության» հետ՝ կառույցի տարածքում տեղի ունեցած «Գարեգին Նժդեհ» գեղարվեստական ֆիլմի ցուցադրման շուրջ ստեղծված իրավիճակը գնահատելու նպատակով: Զուգահեռաբար շարունակվում է մամուլում և սոցցանցերում թեմայի առնչությամբ հրապարակվող նյութերի, հրապարակային ելույթների, քննարկումների մշտադիտարկումը: Հարցի առնչությամբ դեսպանությունը կապի մեջ է ՌԴ ԱԳՆ համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ: Գնահատելով ներկայիս իրավիճակը և շարունակելով աշխատանքները՝ դեսպանությունն այս պահի դրությամբ գրավոր կերպով ռուսաստանյան կողմին չի դիմել:

Ռուսաստանցի պատգամավորի, ինչպես նաև մի շարք այլ գործիչների կողմից հանրային տիրույթում հնչեցված կարծիքը չի համապատասխանում հայ-ռուսական հարաբերությունների ոգուն:

ՌԴ ԱԳՆ-ի և պատկան այլ մարմինների հետ պարբերական բնույթ կրող հանդիպումների և շփումների ժամանակ դեսպանությունը մշտապես ուշադրություն է հրավիրում ռուսաստանցի որոշ քաղաքական և հասարակական գործիչների հակասական, երբեմն՝ բացահայտ հակահայկական հայտարարություններին և մեկնաբանություններին, յուրաքանչյուրի շուրջ ներկայացնելով իր դիրքորոշումը: Ըստ անհրաժեշտության՝ համապատասխան նամակներ ու հայտագրեր են հղվում:

Հարգանքով՝

Սերոբ Բեջանյան
Լրատվության և հանրային
դիվանագիտության վարչության պետ

Լրատվամիջոցների հետ կապի և
հանրային դիվանագիտության բաժին
հեռ.՝ 060 620 202